

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/4**

**11 նոյեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանի գանգատը ՀՀ ՖՆ էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 388 որոշման դեմ:

#### **Կարեն Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.**

Կարեն Հովհաննիսյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ որպես անհատ ձեռնարկատեր ձեռնարկատիրական գործունեություն է իրականացրել 1999 թ-ի ընթացքում:

1999 թ-ին դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ ձեռնարկատիրական գործունեությունն անժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության էջմիածնի ՏՀՏ-ից 15.08.2014 թ-ին ստացվել է 12.08.2014 թ-ի թվագրմամբ թիվ 388 որոշումը, առ այն, որ Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանից ենթակա է գանձման 401.301 դրամ որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար, որից սոցիալական ապահովության վճարի ապառք 240.000 դրամ, տույժ 131.401 դրամ, ընդամենը 371.401 դրամ, հաստատագրված վճարի ապառք 16.800 դրամ, տույժ՝ 13.100 դրամ, ընդամենը՝ 29.900 դրամ:

Գանգատաբերն ակնկալում է արդարացի լուծում տալ բարձրացված հարցին, քանի որ անհասկանալի է, թե ինչ հիմքով և որ օրենքի հիման վրա են պահանջում այդ գումարը, այն դեպքում, երբ նշված որոշումը պատճառաբանված չէ:

Գանգատաբերը տեղեկացնում է, որ երբ անհատ ձեռնարկատիրական գործունեությունն անժամկետ դադարեցնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է Մասիսի ՏՀՏ իրենից պահանջել են ներկայացնել անհատ ձեռնարկատիրոջը վերաբերող բոլոր փաստաթղթերը, որոնք ներկայացվել են: Ավելին, գանգատաբերին երբեք չի տեղեկացվել հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ, ինչպես նաև չի ծանուցվել վարչական վարույթի մասին, որի արդյունքում նա չի մասնակցել վարչական վարույթի քննությանը և չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 388 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 388 որոշման համաձայն 30.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 401.301 դրամ, որից սոցիալական ապահովության վճարի ապառք՝ 240.000 դրամ, տույժ՝ 131.399 դրամ, ընդամենը 371.401 դրամ, ինչպես նաև հաստատագրված վճարի ապառք՝ 16.800 դրամ, տույժ՝ 13.100 դրամ, ընդամենը՝ 29.900 դրամ: Սոցիալական

ապահովության վճարի գումարներն առաջացել են 2009-2012 թ.թ. նվազագույն սոցիալական ապահովության վճարների գումարներից, իսկ հաստատագրված վճարի գումարները՝ հարկային տեսչություն ներկայացված 1999 թ-ի հաստատագրված վճարի ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունով:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեզիստրի կողմից 26.04.1999 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա055218 վկայականի համաձայն, քաղաքացի Կարեն Հովհաննիսյանը գրանցված է ՀՀ պետական ռեզիստրում որպես անհատ ձեռներեց 23.04.1999 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա055218 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 26.04.1999 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 01.01.2002 թ-ը:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա055218 վկայականում, ինչպես նաև վկայականի 26.04.1999 թ-ի թիվ 01 ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանը 01.01.2002 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, դադարել են Կարեն Հովհաննիսյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ, ըստ էության, չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 388 որոշմամբ հաստատագրված վճարի գծով գանձման առաջադրված գումարին, ապա հաշվի առնելով, որ նշված գումարն առաջացել է հարկային տեսչություն ներկայացված 1999 թ-ի հաստատագրված վճարի ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունով, այն Ա/Ձ Կարեն Հովհաննիսյանի կողմից ենթակա է վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 388 որոշումից նվազեցնել ընդամենը 371.401 դրամ:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**